ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2022 թվականի կարիքների համար «Ցանցի արդիականացում» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2022/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «19» ապրիլի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Սերգեյ Թահիրյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության փորձագետ

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Խաչատրյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող

Բացակա՝ Տիգրան Հակոբյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության համակարգչային ցանցի ադմինիստրատոր

հանձնաժողովի քարտուղար՝

Դիանա Գրիգորյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի փորձագետ

1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2022/05» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 15.04.2022թ. ժամը 14:00-ն,

1.2 էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 18.04.2022 թ., ժամը 14:00-ին:

1.3 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայության գնի վերաբերյալ.

Գնման գործընթացը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

N	Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
1	*«ԶԵՐՈ-ԼԱՆ» ՍՊԸ*	Ք. Երևան, Բաբաջանյան 10, բն 34

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության

Ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6. «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2022/05» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«ՁԵՐՈ-ԼԱՆ» ՍՊԸ	**31862140**	**20%**	**38234568**	**31862140**	**20%**	**38234568**	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 18.04.2022թ.-ին, և Համակարգի կողմից առաջին տեղն զբաղեցրած մասնակից է համարվել **«ՁԵՐՈ-ԼԱՆ» ՍՊԸ** -ն

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարության Հավելված 1 և իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2 կամ 1.3/ առկայության մասին.

7.1 **«ՁԵՐՈ-ԼԱՆ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը /դիմում-հայտարարության Հավելված 1, իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2/

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

8.1 **«ՁԵՐՈ-ԼԱՆ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա պահանջվող փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.

9.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը ***որոշեց «ՁԵՐՈ-ԼԱՆ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,***

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել համապատասխան պայմանագիր

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Նախագահ՝

Սերգեյ Թահիրյան

Անդամներ՝

Տիգրան Խաչատրյան

Քարտուղար՝

Դիանա Գրիգորյան